600.0045.27.02.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2019 թվականի №45Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի №123Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 13-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները և հաշվի առնելով «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի փետրվարի 20-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշում է.

1. Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 25-ի «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համարների և կոդերի զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №123Ա որոշման՝
   1) №1 հավելվածի №1 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №1 հավելվածի.
   2) №1 հավելվածը լրացնել №4 աղյուսակով՝ համաձայն №2 հավելվածի.
   3) №2 հավելվածի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով՝

   « 4) հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային 15 կոդը (NDC) և նրա համարային շարքերը:».
2. Ընկերությանը՝ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը Հանձնաժողովի տնօրինմանը հանձնել Հանձնաժողովի 2009 թվականի մարտի 25-ի №123Ա որոշման №1 հավելվածի №1 աղյուսակի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ոչ աշխարհագրական կոդերը և նրանց համարային շարքերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
27 փետրվարի 2019թ